**تصمیم هیئت دولت جمهوری ارمنستان در خصوص اعطای معافیت تعرفه گمرکی برای واردات کره پاستوریزه به ارمنستان، شرایط واردات، اشکال مجوزهای یک‌باره و کلی**

**هیئت دولت جمهوری ارمنستان**

**تصمیم ۱۹ دسامبر ۲۰۲۴، شماره ۲۰۳۶-N**

با استناد به ماده ۲,۱ قانون جمهوری ارمنستان در خصوص «تجارت و خدمات» و مفاد تصمیم شماره ۱۰۶ شورای کمیسیون اقتصادی اوراسیا مورخ ۲۹ نوامبر ۲۰۲۴، هیئت دولت جمهوری ارمنستان تصمیم گرفت:

۱. اعطای معافیت تعرفه‌ای با نرخ تعرفه گمرکی ۰ درصد برای واردات ۲۰۰۰ تن کره پاستوریزه به جمهوری ارمنستان از تاریخ ۲۴ دسامبر ۲۰۲۴ تا ۱۵ ژوئن ۲۰۲۵، تحت کدهای تعرفه گمرکی EAEU 0405 10 110 0 و 0405 10 190 0.

۲. موارد زیر مشخص شد:

۱) این معافیت تعرفه گمرکی فقط برای کره پاستوریزه وارد شده به ارمنستان از طریق رویه گمرکی "ترخیص برای مصرف داخلی" از تاریخ ۲۴ دسامبر ۲۰۲۴ تا ۱۵ ژوئن ۲۰۲۵ اعمال می‌شود، به استثنای کالاهایی که از کشورهای عضو اتحادیه کشورهای مستقل مشترک‌المنافع (CIS) وارد و دارای گواهی منشاء ویژه هستند.

۲) واردات کره پاستوریزه به ارمنستان تنها تا حد مجاز تعیین شده و با داشتن مجوز واردات امکان‌پذیر است.

۳) وزارت اقتصاد جمهوری ارمنستان به عنوان مرجع مجاز برای اعطای مجوزهای واردات کره پاستوریزه شناخته می‌شود (از این پس مرجع مجاز).

۳. مراحل زیر تایید شد:

۱) دستورالعمل توزیع مقدار مجاز واردات کره پاستوریزه بین شرکت‌های فعال در عرصه اقتصاد خارجی به جمهوری ارمنستان، طبق ضمیمه شماره ۱.

۲) فرم مجوز واردات یک‌باره کره پاستوریزه، طبق ضمیمه شماره ۲.

۳) فرم مجوز کلی واردات کره پاستوریزه، طبق ضمیمه شماره ۳.

۴. این تصمیم از روز بعد از انتشار رسمی به اجرا درمی‌آید و شامل روابطی می‌شود که از تاریخ ۲۴ دسامبر ۲۰۲۴ به وجود آمده‌اند.

نیکول پاشینیان، نخست‌وزیر جمهوری ارمنستان

مترجم: اولین سوایان

ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

*Համարը* N 2036-Ն
*Տիպը* Որոշում
*Սկզբնաղբյուրը* Միասնական կայք 2024.12.09-2024.12.22 Պաշտոնական հրապարակման օրը 20.12.2024
*Ընդունող մարմինը* ՀՀ կառավարություն
*Ստորագրող մարմինը* ՀՀ վարչապետ
*Վավերացնող մարմինը*
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 21.12.2024
*Տեսակը* Հիմնական
*Կարգավիճակը* Գործում է
*Ընդունման վայրը* Երևան
*Ընդունման ամսաթիվը* 19.12.2024
*Ստորագրման ամսաթիվը* 20.12.2024
*Վավերացման ամսաթիվը*
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

⊟ Ծանուցում

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2024 թվականի դեկտեմբերի 24-ից ծագած հարաբերությունների վրա:

⊞ Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՍԵՐՈՒՑՔԱՅԻՆ ԿԱՐԱԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ, ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2024 թվականի N 2036-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ՍԵՐՈՒՑՔԱՅԻՆ ԿԱՐԱԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ, ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ԵՎ ԳԼԽԱՎՈՐ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1-ին հոդվածով և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 29-ի N 106 որոշման դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Կիրառել սակագնային արտոնություն, 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառման պայմանով, 2024 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև 2025 թվականի հունիսի 15-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության տարածք՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0405 10 110 0 և 0405 10 190 0 ծածկագրերին դասվող 2000,0 տոննա սերուցքային կարագի նկատմամբ:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշմամբ նախատեսված սակագնային արտոնության կիրառումը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածք 2024 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև 2025 թվականի հունիսի 15-ը ներառյալ «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգի կիրառմամբ ներմուծվող սերուցքային կարագի վրա՝ բացառությամբ ԱՊՀ անդամ պետություններից ծագող և արտոնյալ ծագման հավաստագրով ներմուծվող ապրանքների.

2) Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող սերուցքային կարագի ներմուծումը թույլատրվում է սահմանված ծավալից ոչ ավելի քանակով՝ լիցենզիայի առկայության դեպքում.

3) սերուցքային կարագի ներմուծման լիցենզիա տրամադրելու մասով լիազոր մարմին է ճանաչվում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Հաստատել՝

1) արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև սերուցքային կարագի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) սերուցքային կարագի ներմուծման մեկանգամյա լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) սերուցքային կարագի ներմուծման գլխավոր լիցենզիայի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2024 թվականի դեկտեմբերի 24-ից ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Ն. Փաշինյան

Երևան

20.12.2024
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
դեկտեմբերի 19-ի N 2036-Ն որոշման

## Կ Ա Ր Գ

## ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍԵՐՈՒՑՔԱՅԻՆ ԿԱՐԱԳԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԾԱՎԱԼԻ ԲԱՇԽՄԱՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև սերուցքային կարագի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող սերուցքային կարագի ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման հետ կապված հարաբերություններն արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների միջև:

2. Սույն կարգով կարգավորվող հարաբերությունները կարգավորվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 29-ի N 106 որոշման, ինչպես նաև 2014 թվականի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի N 6 հավելվածով հաստատված՝ «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» և N 7 հավելվածով հաստատված՝ «Երրորդ երկրների նկատմամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրություններին համապատասխան:

### 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) ներմուծման թույլատրելի ծավալ՝ ծավալ, որը սահմանվում է՝ ելնելով վերջին երեք տարվա ընթացքում տվյալ ապրանքի ներմուծման միջին ծավալից.

2) մեկանգամյա լիցենզիա՝ լիցենզիա, որը տրվում է արտաքին առևտրային գործունեության մասնակցին արտաքին տնտեսական գործարքի հիման վրա, որի առարկան լիցենզավորման ենթակա ապրանքն է, և որն իրավունք է տալիս սահմանված քանակով տվյալ ապրանքի ներմուծման համար.

3) գլխավոր լիցենզիա՝ լիցենզիա, որն արտաքին առևտրային գործունեության մասնակցին իրավունք է տալիս լիցենզավորման ենթակա առանձին տեսակի ապրանք ներմուծելու համար՝ լիցենզիայով նախատեսված քանակով.

4) ապրանք՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0405 10 110 0 և 0405 10 190 0 ծածկագրերին դասվող սերուցքային կարագ.

5) հաշվարկված ժամանակաշրջան՝ ներմուծման սահմանափակման կիրառման տարվան անմիջապես նախորդող երեք տարին.

6) արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված կամ հաշվառված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերեր.

7) պատմական գնորդներ՝ հաշվարկված ժամանակաշրջանում ներքին սպառման համար ապրանք ներմուծող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան արտաքին տնտեսական գործունեության